

Լըսեց գայն Տիգրան բաշերով ցըցուն,
Լըսեց Արտաւագդ, ցնցեց շղթաներ.
Հայաստանն առաւ ծիածանի գոյն,
Իր երգն յաղթական նոր դըրօշակ էր:

— Ես պիտի երթամ, օր մ'ըսաւ յանկարծ,
Դէպի Արարատ եւ Ծիրանկատար.
Համբոյր կ'ուզէ մեր հողն աստուածացած,
Ու ժամերն՝ աղօթք, խաչերը՝ բուրվառ: —

Ա՛խ, դուն չերթայիր, չերթայիր երբեք.
Եփրատի ափին ձեռք մը դաւանան,
Պիտի քողներ մեզ յաւէտ սրտաբեկ,
Քրնարըդ գրկած՝ ուռենին լալկան:

Թող երգերդ ըլլան խունկ ու շարական,
Սուրբ պատարագիդ կարմիր արեւին.
Քեզ ալ նոր պըսակ մ'եկուսեց Հայաստան,
Թելերը մանանչ եւ փայլն իր հոգին:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՀԱՄԱՐՈՅԸ ՀԱՎԵՐՈՅ

Հ. Կ. ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆԻՆ

Ա.

Ո՞ւր ես, արծիւ դու սըրաքոյն,
Այս մեր երկրէն ինչո՞ւ փախար,
Քրնարդ առած քեւերուդ տակ՝
Նոր երկնքի մը սիրահար:

Երբ կը խորհիմ կեանքիդ վերջին գիշերին՝
Կ'ամպանայ սէրս, կ'ըլլայ մորիկ գայրագին.
Քովըդ կանգնած, տուրեւտիդ ունկընդիր,
Կը գգամ սրտիդ ալեկոծումն ավանածիր:

Համբոյր նակտիդ, ուր արեւներ վառեցան,
Ուր վերք մը այժմ վարդի մը պէս հոտեւան՝
Ծաղկած է կոյր ոստիկանին հարուածէն.
Ա՛հ, հեղեղներն այդ նակատին լուսեղէն:

Համբոյր հոգւոյդ, սուրբ տենչերու կրակարան.
Շող մ'օծումէդ եւ շնորհներէդ բագմազան,
Թուղքին յանձնած վերջին հըգօր ցոլերէդ
Ա՛հ, մեկնէիր մեզի քողած մաս մը գէթ:

Ի՞նչ յուզումով երագեցիր վեներտիկն
Եւ հայրենի հողն ու լիներ արծաթիկ.
Այրարատէն հով մ'եկաւ քեզ փարելու՝
Որ գոհդ ըլլար Մահուան մէջ ալ միշտ ազդու:

Բ.

Աստղ մ'իջաւ հուր երկնքէն
Գլխուդ վառեց լուսապըսակ,
Դուն գրկեցիր անհունութիւնն՝
Ինչպէս Արտագ Դիշերն անփակ:

Աբշալոյսին դու նոր արեւ մը հագած՝
Աչքերէդ հուր կը ցայտէիր սիրարբած,
Հրդեհեցիր սրտեր, կայծեր ցանցեր,
Առիւծ մ'էիր վագրերուն մէջ ցանուցիր:

Գըլուխն անցած կարաւանին՝ մեկնեցար
Փառքի նամբան, գարուններով մշտավառ,
Անմահութեան նոր այգերուն ծարաւի՝
Ըսիր, կ'երթամ արիւնի ծով ծիրանի:

Բոց ու ժըպիտ, Տարօնի ցոլք հանաբեղ,
Կեցի՛ր վայրկեան մ'ալ, մոռցա՞ր լոյսը բիրեղ
Հայրենիքիդ արեգակին եւ սիւզն հեզ՝
Որ դամբանէդ անցնելով պիտ' ողբար քեզ:

Ո՞վ մուսաներ, փունջերն հոգւոյն քաղցե՛ք,
Նետուած դաշտեր, այրած ցաւէն յոգնաբեկ,
Վանկ մը գոնէ յետին երգէն կարապի,
Որ մեր սրտին մէջ որպէս յուշ վերապրի:

Հ. ՄԵՍՐՈՊ ՀԱՆԱՇԵԱՆ